



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ  
ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3,  
Հեռ. 50 20 20, 59 46 05

ԱԿ/3-4/4035-11 15.06.2011թ

«Հարկ վճարողների պաշտպանություն» Հ/Կ  
նախագահ արն Փ.Թադևոսյանին

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 29.07.2010թ. N1007-Ն որոշմամբ հաստատված՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրման կարգի 4-րդ կետով Ձեր 24.05.2011թ. (07.06.2011թ. N5198-11) N003 գրության վերաբերյալ իրազեկման կարգով տեղեկացվում է.

Գրությամբ բարձրացված առաջին հարցը կանոնակարգված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, մասնավորապես նշված օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն «... եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն ստորակետերով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է»:

Քանի որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների վերաբերյալ» հրահանգի 6.1-րդ կետում թվարկված պայմաններն իրարից առանձնացված են ստորակետով, ուստի այդ նորմի կիրառման համար թվարկված պայմանների առկայությունը պարտադիր է:

Գրությամբ բարձրացված երկրորդ հարցի հետ կապված հայտնում եմ, որ վերը նշված հրահանգի 6.1-րդ կետի համաձայն «կիրառված հատուցման գումարը դիտվում է որպես լրիվ արժեքով հատուցման գումար, կամ այլ կերպ ասած՝ դրանում ԱԱՀ-ի գումարի ներառումը համարվում է հիմնավորված, եթե ... հատուցման գումարի նկատմամբ 16.67 տոկոս հաշվարկային դրույքաչափի կիրառմամբ որոշված ԱԱՀ-ի գումարը ներառվել է հարկային մարմին ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկում արտացոլվող հարկային պարտավորության ընդհանուր գումարում»: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 14.06.2010թ. N 1423-Ն հրամանով հաստատված N2 հավելվածի 16-րդ կետի համաձայն «ԱԱՀ-ի հաշվարկի 12-րդ կետի [Ա] վանդակում լրացվում է այն գործարքների ընդհանուր արժեքը (լրիվ արժեքով հատուցման ընդհանուր գումարը), որոնց արժեքը հայտարարվում է լրիվ արժեքով հատուցման գումար (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը):...»:



Ա.Ալավերդյան